

ՀՀ ԳԱԱ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՊՐՈՖԼԵՄՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վարոյան Աննա Սերգեյի

Փոփոխությունների ֆորմալ վերիֆիկացիա բիզնես պրոցեսների շաբլոնների
համար

Ե.13.04 «Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի
մաթեմատիկական և ծրագրային ապահովում» մասնագիտությամբ
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Սեղմագիր

Երևան – 2011

ИНСТИТУТ ПРОБЛЕМ ИНФОРМАТИКИ И
АВТОМАТИЗАЦИИ НАН РА

Варосян Анна Сергеевна

Формальная верификация изменений в шаблонах бизнес процессов

Автореферат

диссертации на соискание ученой степени кандидата физико-математических наук
по специальности 05.13.04 – “Математическое и программное обеспечение
вычислительных машин, комплексов, систем и сетей”

Ереван – 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ.,
պրոֆեսոր Ս.Կ. Շուքուրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Է.Մ.Պողոսյան
ֆ.մ.գ.թ. Ա.Մ.Վասիլյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան

Պաշտպանությունը կայանալու 16⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ
Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում գործող 037
մաստագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0014, Պ. Սևակի փ. 1):

Ատանախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է

037 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, ֆ.մ.գ.դ., Մ.Ե. Հարությունյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: академик НАН РА, д.ф.м.н.,
профессор С.К. Шукурян

Официальные оппоненты: д.ф.м.н, профессор Э.М.Погосян
к.ф.м.н А.М.Василян

Ведущая организация: Российско-Армянский (Славянский) университет

Защита состоится 1-го июля 2011г., в 16⁰⁰ ч., на заседании специализированного совета 037
в Институте проблем информатики и автоматизации НАН РА (адрес: Ереван 0014, ул. П.
Севака, 1).

С диссертацией можно ознакомиться в библиотеке ИПИА НАН РА.

Автореферат разослан 1-го июня 2011г.

Ученый секретарь специализированного
совета 037, д.ф.м.н., профессор

М.Е. Арутюнян

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը Թեմայի արդիականությունը

Բիզնես պրոցեսները (ԲՊ) հանդիսանում են տարբեր տեսակի աշխատանքների հոսքերի(workflow) վարքի նկարագրման և իրականացման կարևոր բաղկացուցիչ մասը: Մինևույն ժամանակ աշխատանքային գործընթացի օրեցօր աճող բարդությունը հանգեցնում է բիզնես պրոցեսների խրթին կառուցվածքին, ինչի արդյունքում նրանց նախագծումն ու ստուգումը դառնում է ժամանակատար և դժվար: Այդ իսկ պատճառով նախընտրելի պրոցեսների բազմության որոշման հարցում կազմակերպությունները գերադասում են օգտվել գործնականում լավագույնը ճանաչված (best practice) պրոցեսների հայտնի գրադարաններից¹: Գրադարանների տրամադրած բիզնես պրոցեսների շաբլոնները հանդիսանում են նախատիպ՝ պահանջվող պրոցեսի կառուցման համար: Զուգահեռներ անցկացնելով օբյեկտակոդմնորոշված ծրագրավորման տերմինների հետ², կանվանենք բիզնես պրոցեսներ ծնող կադապարը՝ բիզնես պրոցեսների նախագծման շաբլոն, բիզնես պրոցեսների դասի կոնկրետ օրինակը՝ բիզնես պրոցեսի նմուշ:

Բիզնես պրոցեսների նախագծման շաբլոնները (ԲՊՆՇ) լայնորեն օգտագործվում են անհրաժեշտ բիզնես պրոցեսներ կառուցելու համար՝ նախօրոք ենթարկվելով ձևփոխությունների: Այդ աշխատանքների ծավալը գրականության տվյալներով բավականաչափ մեծ է³ և թանկ⁴: Այդ իսկ պատճառով առաջնային է դառնում նախագծման շաբլոնների փոփոխությունների արդյունքում ստացված պրոցեսների ճշտության ստուգումը: Սովորաբար փոփոխությունների լինում են երկու տեսակի՝ կառուցվածքային և ֆունկցիոնալ⁵:

Հայտնի են պրոցեսների ստուգման ֆունկցիոնալ և կառուցվածքային վերիֆիկացիայի եղանակները: Այն դեպքերում, երբ պրոցեսում կատարվող փոփոխությունները առնչվում են միայն պրոցեսի կառուցվածքին, պրոցեսների վերիֆիկացիան կոչվում է կառուցվածքային վերիֆիկացիա⁶: Կառուցվածքային վերիֆիկացիան նախատեսված է ստուգելու համար պրոցեսի կառուցվածքային առանձնահատկությունները, ինչպիսիք են՝ ցիկլերի առկայություն, գրաֆիկապակցվածություն, ազատ մուտքերի առկայություն և այլն: Ի տարբերություն կառուցվածքային վերիֆիկացիայի, պրոցեսի ֆունկցիոնալ վերիֆիկացիան⁷

¹Introducing the IBM Process Reference Model for IT, Second Edition,IBM, January 2007

²Schach, Stephen (2006). Object-Oriented and Classical Software Engineering, Seventh Edition. McGraw-Hill. ISBN 0-073-19126-4.

³The Infrastructure Optimization Journey, Microsoft Corporation, 2008

⁴C. Aileen, T. Wui-Gee, T. Mark, 2006, "Summary of ITIL Adoption Survey Responses. Technical Report", itSMF Australia Conference, Toowoomba, Australia

⁵B. A. Rajabi, S. P. Lee "Modeling and Analysis of Change Management in Dynamic Business Process, IJCEE Journal, Vol. 2, No. 1, February, 2010 1793-8163

⁶F. Touré, K. Baïna, K. Benali; "An Efficient Algorithm for Workflow Graph Structural Verification", LNCS Springer Berlin / Heidelberg, 2008

⁷Andreas Meyer; "Principles of Functional Verification", Newnes; 1 edition, 2003

նախատեսված է ստուգելու պրոցեսի վարքագծային/ֆունկցիոնալ ճշտությունը, ինչը իր հերթին բերում է մի շարք այլ խնդիրների հետազոտմանը, ինչպես օրինակ՝ ինֆորմացիոն հոսքի գրաֆի վերլուծությանը: Ֆունկցիոնալ վերիֆիկացիայի հայտնի եղականներն են ֆորմալ վերիֆիկացիան և սիմուլյացիան⁷: Ֆունկցիոնալ վերիֆիկացիայի համար կիրառվող ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը ընդհանուր առմամբ անլուծելի է⁸: Մյուս կողմից սիմուլյացիայի մեթոդը ենթադրում է դեպքերի հատարկում, որը, որպես օրենք, ունի աստիճանային(exponential) բարդություն: Հետևաբար, հետաքրքրություն են ներկայացնում ֆորմալ վերիֆիկացիայի այն մեթոդները, որոնք ունեն բազմանդամային բարդություն և առավել արդյունավետ են, քան՝ սիմուլյացիան: Այդպիսի արդյունավետ մեթոդների որոնումը կարևոր է նաև ԲՊՆԵ-ների փոփոխությունների ստուգման համար՝ հաշվի առնելով այդ շարքումների գրադարանների ծավալը և շաբլոնից ստացվող առանձին պրոցեսների քանակը:

Նշենք, որ պրոցեսի նկատմամբ կատարվող փոփոխությունները կարող են լինել երկու տիպի՝ լոկալ և գլոբալ⁹: Լոկալ փոփոխությունները վերաբերվում են տվյալ պրոցեսի նմուշին, իսկ գլոբալ փոփոխությունները՝ բուն պրոցեսի շաբլոնին: ԲՊՆԵ-ների նկատմամբ կատարվող փոփոխությունները գլոբալ են, քանի որ վերաբերվում են շաբլոնին և ոչ թե՝ պրոցեսի նմուշին: Մյուս կողմից ԲՊՆԵ-երում նկարագրվում է պրոցեսի կատարման տրամաբանությունը և որոշ ֆունկցիաներ չեն կարող հստակեցվել մինչև պրոցեսի նմուշ դառնալը¹⁰: Հետևաբար, ֆորմալ վերիֆիկացիայից առաջ անհրաժեշտ է մաթեմատիկորեն մոդելավորել ԲՊՆԵ դասը և հստակեցնել բոլոր ֆունկցիաները՝ շաբլոնի շրջանակներում: Ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը լուծելով այդ դասի համար, կլուծենք այն նաև վերը նկարագրված բիզնես պրոցեսների գրադարանների համար:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները

Աշխատանքի նպատակն է.

- կառուցել ֆորմալ մոդել ԲՊՆԵ դասի համար, որը փակում է հայտնի նախագծման շաբլոնների գրադարանները, ինչպիսիք են՝ ITIL, PRM-IT, ITSM, MOF գրադարանները,
- ձևակերպել ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը ԲՊՆԵ փոփոխությունների ստուգման համար,
- հետազոտել ֆորմալ վերիֆիկացիայի արդյունավետ ալգորիթմի գոյությունը նշված դասի համար,

⁸ Nachum Dershowitz, Zohar Manna , "Verification: theory and practice : essays delivered to Zohar Manna on the occasion of his 64th birthday", Springer, 2004, ISBN 3540210024, 9783540210023

⁹ I. Weber, J. Hoffmann, J. Mendling "Beyond soundness: on the verification of semantic business process models", Distributed and Parallel Databases ,Volume 27, Number 3, 271-343,

¹⁰ Johnson,M.W.; A.Hately; B.A. Miller; and R. Orr. 2007. "Evolving standards for IT service management". IBM SYSTEMS JOURNAL, VOL 46, NO 3 (2007)

- գոյության դեպքում դիտարկել ալգորիթմի ընդլայնման հնարավորությունները բոլոր տիպի բիզնես պրոցեսների համար,
- կատարել փորձարկումներ, որոնք կճշտեն առաջարկված մոտեցման կիրառման ոլորտը և կհաստատեն այդ մոտեցման արդյունավետությունը:

Հետազոտման օբյեկտներ են հանդիսանում բիզնես պրոցեսների նախագծման շաբլոնների ֆորմալ ներկայացման տարրերը՝ օպերատորներ, տվյալների կոնտեյներներ և այլն, ինչպես նաև՝ վերիֆիկացիայի հետ կապված այնպիսի հասկացողություններ, ինչպիսիք են՝ պրոցեսի վիճակ, պրոցեսի ինվարիանտ և այլն:

Հետազոտման մեթոդները

Աշխատանքում օգտագործված են ֆորմալ վերիֆիկացիայի, գրաֆների մետոթյան և մաթեմատիկական տրամաբանության մեթոդներ:

Արդյունքների գիտական նորույթը

Աշխատանքի գիտական նորույթ է համարվում հետևյալը.

- Կառուցվել է ֆորմալ մոդել ԲՊՆՇ դասի համար՝ առաջարկված տարրական պրոցեսների (պրիմիտիվների) և պրոցեսների կառուցման գործողությունների հիման վրա, որոնց միջոցով կառուցվել է պրոցեսների ԲՊՆՇ հանրահաշիվ:
- Ցույց է տրվել, որ այն ծածկում է ITIL, PRM-IT, ITSM, MOF գրադարաններում ընդգրկված բիզնես պրոցեսների նախագծման շաբլոնները:
- Ձևակերպվել է ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը ԲՊՆՇ դասի փոփոխությունների ստուգման համար:
- Ցույց է տրվել, որ ցիկլիկ ԲՊՆՇ-ների ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը բազմանդամային ալգորիթմով բերվում է ալգիլիկ ԲՊՆՇ-ների ֆորմալ վերիֆիկացիայի խնդրին:
- Առաջարկվել է պրոցեսների վիճակների շաբլոնների(ՊՎՃ) հանրահաշիվ:
- Ցույց է տրվել, որ ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը լուծելի է ալգիլիկ ԲՊՆՇ - ների համար բազմանդամային ալգորիթմով՝ օգտագործելով ՊՎՃ հանրահաշիվը,
- ԲՊՆՇ-ների ֆորմալ վերիֆիկացիայի ալգորիթմի հիման վրա կառուցվել է մասնակի ճանաչող բազմանդամային ալգորիթմ՝ IBM's MQSeries Workflow¹¹ ֆորմալ մոդելի վրա հիմնված բոլոր տիպի բիզնես պրոցեսների համար:

Ստացված արդյունքների կիրառական նշանակությունը

Իրականացված է նախագծման շաբլոնների վրա հիմնված բիզնես պրոցեսների մշակման գործիքային միջավայր, որը ներառում է շաբլոնների վրա հիմնված

¹¹ F., Roller, D. Leymann "Production Workflow: Concepts and Techniques" Prentice Hall Press, 2000

պրոցեսների մշակման բոլոր փուլերը: Այս գործիքային միջավայրի օգնությամբ հնարավոր է ստեղծել կազմակերպության սեփական պահանջներին համապատասխանող կոռեկտ պրոցեսների գրադարան: Ունենալով կոռեկտ մշակման շարժումներ, շարժումում փոփոխություններ կատարելու հնարավորություն և ստուգելով ստացված պրոցեսի ճշտությունը՝ կազմակերպությունը ձևավորում է կոռեկտ պրոցեսների սեփական գրադարանը:

Ներդրումներ

Աշխատանքի արդյունքների գործնական օգտագործումը և նրանց արժեքը արտացոլված են

1. ISTC A-1451 գրանտի կատարման հաշվետվություններում:

2. «Վիրաժ Լոջիք Հայաստանյան մասնաճյուղ» ընկերությունում ներդրման համապատասխան արձանագրությունում:

Պաշտպանությանը ներկայացվում են հետևյալ դրույթները

- ԲՊՆԸ դասի ֆորմալ մոդելը՝ առաջարկված տարրական պրոցեսների (պրիմիտիվների) և պրոցեսների կառուցման գործողությունների հիման վրա, որոնց միջոցով կառուցվում է պրոցեսների ԲՊՆԸ հանրահաշիվ,
- Ցիկլիկ ԲՊՆԸ-ների ֆորմալ վերիֆիկացիայի խնդրի բերելիությունը ացիկլիկ ԲՊՆԸ-ների ֆորմալ վերիֆիկացիայի խնդրին՝ բազմանդամային ալգորիթմով,
- Ացիկլիկ ԲՊՆԸ-ների ֆորմալ վերիֆիկացիայի խնդրի լուծելիությունը՝ բազմանդամային ալգորիթմով,
- ԲՊՆԸ դասի պրոցեսների ֆորմալ վերիֆիկացիայի ալգորիթմի ընդլայնումը բոլոր տիպի բիզնես պրոցեսների համար՝ որպես մասնակի ճանաչող ալգորիթմ,
- Մշակված գործիքային միջավայրերը, որոնք իրականացրել են նշված մոտեցումը և հաստատել են մոտեցման կենսունակությունը

Ստացված արդյունքների ապրոքացիան

Թեկնածուական աշխատանքի հիմնական արդյունքները և դրույթները քննարկվել և ներկայացվել են ԵՊՀ ալգորիթմական լեզուների ամբիոնի սեմինարների ընթացքում (2001-2006թթ.), ԵՊՀ ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի ընդհանուր սեմինարների ընթացքում (2007-2010թթ.), ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի ընդհանուր սեմինարին (2010թ.) Մոդելավորման և սիմուլյացիայի տեխնոլոգիաների եվրոպական միության(EUROSIS) Ապագայի բիզնես տեխնոլոգիաների միջազգային կոնֆերանսին 2008թ.(FUBUTEC' 2008, Պորտո, Պորտուգալիա) և 2009թ. (FUBUTEC' 2009, Բրյուզել, Բելգիա), Բաշխված հաշվարկները և GRID տեխնոլոգիաները կրթության և գիտության մեջ միջազգային կոնֆերանսին GRID' 2008 (Դուբնա, Ռուսաստանի Դաշնություն), Մոդելավորման և սիմուլյացիայի տեխնոլոգիաների միջազգային միության(SCS) Բիզնեսի և արտադրության սիմուլյացիայի միջազգային կոնֆերանսին 2009թ. (BIS' 2009, Ման

Դիեգո, ԱՄՆ) և 2010թ. (BIS' 2010, Օռլանդո, ԱՄՆ), Կոմպյուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ կոնֆերանսին CSIT'2009(Երևան, Հայաստան):

Աշխատանքի հիմնական արդյունքները հրատարակված են 7 հոդվածներում, որոնց ցանկը բերված է սեղմագրի վերջում:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը

Ստենախոսությունը բաղկացած է առաջաբանից, հինգ գլուխներից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը 124 էջ է, օգտագործված գրականության ցանկն ընդգրկում է 69 անուն:

Աշխատանքի բովանդակությունը


Առաջաբանում հիմնավորված է արդիականությունը, ձևակերպված է աշխատանքի նպատակը: Բերված է աշխատանքի համառոտ նկարագրությունն ըստ գլուխների:

Առաջին գլխում կատարված է աշխատանքների վերլուծություն բիզնես պրոցեսների նախագծման շարժումների հայտնի գրադարանների վերաբերյալ: Հիմնավորված է պրոցեսների ֆորմալ վերիֆիկացիայի խնդրի կարևորությունը:

§1.1 – ում նկարագրված են բիզնես պրոցեսների հիմնական տեսակները և նրանց դերը կազմակերպության կենսացիկլում:


§1.2 - ում դիտարկված է SS ղեկավարման պրոցեսներին-կողմնորոշված մոտեցումը և գոյություն ունեցող SS ծառայությունների ղեկավարման պրոցեսների ստանդարտ գրադարանները՝ ITIL/ISO20000 best practice (BP), IBM Process Reference Model for IT (PRM-IT) և Microsoft Operations Framework (MOF):

§1.3 - ում դիտարկված է բիզնես պրոցեսների մշակման և վերիֆիկացիայի խնդիրները: Նկարագրված է բիզնես պրոցեսների ղեկավարման կենսացիկլը(Նկար 1):



Նկար 1: Վերիֆիկացիան ԲՊ ղեկավարման կենսացիկլում

Պրոցեսների մշակումը կատարվում է, հիմնականում, նախագծման շարժումների գրադարանների հիման վրա: Հետևաբար, այս եղանակով աշխատելիս առաջնային է դառնում շարժումների փոփոխությունների արդյունքում ստացված պրոցեսների վերիֆիկացիան(Նկար 1): Պրոցեսի ֆունկցիոնալ վերիֆիկացիան նախատեսված է ստուգելու համար պրոցեսի վարքագծային/ֆունկցիոնալ ճշտությունը, որը կարող է կատարվել ֆորմալ վերիֆիկացիայի կամ սիմուլացիայի միջոցով(Նկար 2): Աշխատանքում առաջարկվում է բիզնես պրոցեսների ֆորմալ վերիֆիկացիայի մոտեցումը և ցույց է տրվում, որ ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը լուծելի է ԲՊՆՇ դասի համար, որը փակում է ԲՊՆՇ հայտնի գրադարանները: Այլ կերպ ասած, այդ պրոցեսների համար անհրաժեշտություն չի առաջանում կիրառել սիմուլացիա:



Նկար 2: Բիզնես պրոցեսների ֆունկցիոնալ վերիֆիկացիայի մոտեցումը

Երկրորդ գլխում նկարագրված է ացիկլիկ բիզնես պրոցեսների ֆորմալ մոդելը: Ձևակերպված է ֆորմալ մոդելի ընդլայնումը ցիկլի պրոցեսների համար: Սահմանված է բիզնես պրոցեսների ֆորմալ վերիֆիկացիան և ձևակերպված է խնդրի դրվածքը:

§2.1 - ում նկարագրվում է IBM's MQSeries Workflow ացիկլիկ բիզնես պրոցեսների նկարագրման ֆորմալ մոդելը՝ օգտագործելով հետևյալ նշանակումները.

- եթե $x = \langle x_1, \dots, x_n \rangle$ n -յակ է և $1 \leq i_1, \dots, i_k \leq n$ ինդեքսների բազմություն է, ապա $\pi_{i_1, \dots, i_k}(x)$ -ով նշանակենք $\langle x_{i_1}, \dots, x_{i_k} \rangle$ հավաքածուն:
- X բազմության համար $\wp(X)$ -ով նշ. X -ի բոլոր ենթաբազմությունների բազմությունը:

Սահմանում(ացիկլիկ պրոցես – A-պրոցես)

A-պրոցես հանդիսանում է $P = \langle T, N, C, V, E, \Phi, i, o, \Psi, \Delta \rangle$ n -յակը, որտեղ

1. T -ն, N -ը, C -ն, V -ն, $E \subseteq N \times N \times C$ -ն համապատասխանաբար *տիպերի, օպերատորների, անցման պայմանների, փոփոխականների, ղեկավարման կոնեկտորների* վերջավոր բազմություններ են,
2. $\Phi: N \rightarrow F$ *միակցման պայմանների* արտապատկերում է,
3. $i: N \cup C \rightarrow V$ *մուտքային տվյալների* արտապատկերում է,
4. $o: N \rightarrow V$ *ելքային տվյալների* արտապատկերում է,
5. $\Psi: N \cup C \rightarrow E$
 - a. $A \in N, \Psi(A): x_{v \in i(A)} \text{DOM}(v) \rightarrow x_{v \in o(A)} \text{DOM}(v)$:
 - b. $p \in C, \Psi(p): x_{v \in i(p)} \text{DOM}(v) \rightarrow \{0, 1\}$:
6. $\Delta: N \times (N \cup C) \rightarrow \bigcup_{A \in N, B \in N \cup C} \wp(o(A) \times i(B))$ *տվյալների կոնեկտորների* արտապատկերումն է

Պրոցեսի ամփոփ սահմանումը բերված է ատենախոսության մեջ:

Նշ. $A^{\rightarrow} = \{e \in E \mid \pi_1(e) = A\}$ -ով և $A^{\leftarrow} = \{e \in E \mid \pi_2(e) = A\}$ -ով $A \in N$ գազաթին հաջորդող և նախորդող գազաթիների բազմությունները՝ ըստ ղեկավարման գրաֆի:

§2.2 - ում նկարագրվում է բիզնես պրոցեսների ֆորմալ մոդելի ընդլայնումը ցիկլիկ պրոցեսների համար:

Ճանապարհը օպերատորների և նրանց միացնող ղեկավարման կոնեկտորների $\langle a_1, e_1, \dots, a_{k-1}, e_{k-1}, a_k \rangle$ հաջորդականությունն է, այնպիսին, որ $\pi_1(e_i) = a_i$ & $\pi_2(e_i) = a_{i+1}, 1 \leq i \leq k-1, k > 1$: Նշ. $\text{path}(a_1, a_k) = \{a_1, \dots, a_{k-1}, a_k\}$:
 $\langle a_1, e_1, \dots, a_k, e_k, a_1 \rangle, k > 1$ ճանապարհը կանվանենք *ցիկլ*:

Ω - P-ի բոլոր ցիկլերի բազմությունը, N_C - P-ի բոլոր ցիկլերի մուտքային գագաթների բազմությունը, K_σ - $\sigma \in \Omega$ ցիկլին պատկանող օպերատորների բազմությունը: $\forall A \in N$ գործողության համար $A_\Delta^- = \{D \in N \mid \Delta(A, D) \neq \emptyset\}$:

Ցիկլերի հատուկ սահմանները հետևյալ կերպ. $\sigma_1 \circ \dots \circ \sigma_k \equiv K_{\sigma_1} \cap \dots \cap K_{\sigma_k}$, որտեղ $\sigma_i \in \Omega$, $1 < i \leq k \leq |N_C|$:

a_1 միակ մուտքային գագաթով $\sigma \in \Omega$ ցիկլը կոչվում է *լոկալիզացված ցիկլ*, եթե $\forall \lambda \in \Omega$, $\lambda \neq \sigma$, $\lambda \cap \sigma \subseteq \{a_1\}$: (առաջին անգամ ներմուծվել է Ալենի կողմից՝ ծրագրերի օպտիմիզացիայի խնդրի դիտարկման ժամանակ¹²): Ω . $\sigma \in \Omega$ լոկալիզացված ցիկլի մուտքային գագաթը $h(\sigma) \Rightarrow a_1 \equiv h(\sigma)$:

$\forall A, A' \in N$ օպերատորները կանվանենք *համաձայնեցված օպերատորներ*, եթե $\Delta(A, A') \neq \emptyset \Rightarrow A' \in A^-$:

$b \in N$ *ցիկլի ճյուղավորման օպերատոր* է $\leftrightarrow \exists \sigma \in \Omega$, $e \in E$, $b' \in N \setminus K_\sigma$ ($b \in K_\sigma$, $\pi_1(e) = b$, $\pi_2(e) = b'$): Ω . BR_σ - $\sigma \in \Omega$ ցիկլի ճյուղավորման օպերատորների բազմությունը, իսկ BR - P-ի ճյուղավորման օպերատորների բազմությունը:

Յուրաքանչյուր ճյուղավորման օպերատորի համար կսահմանենք *վիճակի ռեգիստր*, որն ընդունում է հետևյալ արժեքներից մեկը.

1. 0 - ճյուղավորման օպերատորը դեռ չի կատարվել,
2. n; ($n \geq 1$) - ճյուղավորման օպերատորը կատարվել է ճիշտ n անգամ:

Ժամանակակից բիզնես պրոցեսների մոդելավորման լեզուներում ցիկլի պրոցեսի հիմքում ընկած է LOOP կառուցվածքը¹³, որը համապատասխանում է լոկալիզացված ցիկլի գաղափարին¹²: IBM ընկերության կողմից կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ ոչ կառուցվածքային ցիկլերը բերվում են լոկալիզացված ցիկլերի¹⁴: Մյուս կողմից ITIL, PRM-IT, ITSM, MOF գրադարանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նախագծման շաբլոնների ցիկլերը լոկալիզացված են: Հաշվի առնելով այս ամենը, ցիկլիկ պրոցեսը սահմանվում է լոկալիզացված ցիկլերի համար:

Սահմանում (ցիկլիկ պրոցես – C-պրոցես)

W-պրոցեսը կանվանենք ցիկլիկ պրոցես կամ C-պրոցես, եթե

1. $\Omega \neq \emptyset$ և $\forall \sigma \in \Omega$ լոկալիզացված է,
 2. $C^{\leftarrow}(A) := \pi_3(\{e \in E \mid \pi_2(e) = A \ \& \ \exists \sigma \in \Omega (h(\sigma) = A \ \& \ \pi_1(e) \in K_\sigma)\})$ - ներքին միավորման անցման պայմանների բազմությունն է
 3. $C^{\rightarrow}(A) := \pi_3(\{e \in E \mid \pi_2(e) = A \ \& \ ! \exists \sigma \in \Omega (h(\sigma) = A \ \& \ \pi_1(e) \in K_\sigma)\})$ - արտաքին միավորման անցման պայմանների բազմությունն է
 4. $\forall A \in N_C$, $\Phi(A) \in \Phi_A^*$ արտաքին միավորման պայման է, որտեղ $\Phi_A^* := \{ \wedge \quad \vee \quad \text{pi} \mid \text{pi} \in \{p', \sim p' \mid p' \in \{C^{\leftarrow}(A)\}\} \}$
- $1 \leq j \leq k \quad 1 \leq i \leq l_j$

¹² Allen, F.E., Cocke, J., 1976, “A program dataflow analysis procedure”, Communications of the ACM, 19(3):137-147

¹³ Arthur ter Hofstede; Boualem Benatallah; Hye-Young Paik “Business Process Management Workshop”, BPM 2007, Lecture Notes in Computer Science, Vol. 4928, ISBN: 978-3-540-78237-7, 518 p., Australia, September 24, 2007

¹⁴ Koehler, J., Hauser, R., 2004, “Untangling Unstructured Cyclic Flows: A Solution Based on Continuations”, oopIS/DOA/ODBASE (1), pp. 121-138

5. $\forall A \in N_C, \Phi_C(A) \in \Phi_{AC}^*$ ներքին միավորման պայման է, որտեղ
 $\Phi_{AC} := \{ \bigwedge_{1 \leq j \leq k} \bigvee_{1 \leq i \leq l_j} p_i \mid p_i \in \{p', \sim p' \mid p' \in \{C^{C^{\leftarrow}}(A)\}\} \}$:

ԵՆթադրենք, որ $\forall A \notin N_C, \Phi_C(A) = 0$:

6. $\forall A \in N_C$ օպերատորը կարող է կատարվել $\Leftrightarrow (\Phi(A)(i(p_1), \dots, i(p_{n_A})) = 1) \vee (\Phi_C(A)(i(q_1), \dots, i(q_{m_A})) = 1)$, որտեղ $C^{C^{\leftarrow}}(A) = \{p_1, \dots, p_{n_A}\}$, $C^{C^{\leftarrow}}(A) = \{q_1, \dots, q_{m_A}\}$:

7. $\forall \sigma \in \Omega, \forall A \in K_\sigma, A' \in K_\sigma \Rightarrow A \text{ և } A'$ համաձայնեցված օպերատորներ են

Հետագայում բիզնես պրոցես ասելով կհասկանանք A-պրոցեսը կամ C-պրոցեսը: P բիզնես պրոցեսի համար մուտքային և ելքային օպերատորների բազմություններ ասելով կհասկանանք համապատասխանաբար $In(P) = \{A \in N \mid A^{\rightarrow} = \emptyset\}$ և $Out(P) = \{A \in N \mid A^{\leftarrow} = \emptyset\}$ բազմությունները: Պրոցեսը կանվանենք *ավարտված պրոցես*, եթե չկան կատարվող օպերատորներ: Բիզնես պրոցեսների մեկնաբանության ավգորիթմի ֆորմալ նկարագրությունը բերված է ատենախոսության մեջ:

Հայտնի է, որ ացիկլիկ պրոցեսը երաշխավորված ավարտվում է, եթե երաշխավորված ավարտվում է նրա յուրաքանչյուր օպերատորը, իսկ ցիկլիկ պրոցեսը՝ օպերատորի և ցիկլերի երաշխավորված ավարտվելու դեպքում¹⁵:

Այս աշխատանքում չի դիտարկվում բիզնես պրոցեսների ավարտի խնդիրը:

§2.3-ում ձևակերպվում են բիզնես պրոցեսի կոռեկտության գաղափարը և լրացուցիչ սահմանումներ, որոնք անհրաժեշտ են բիզնես պրոցեսների ֆորմալ վերիֆիկացիայի խնդրի ձևակերպման և լուծման համար:

Սահմանում (բիզնես պրոցեսի կոռեկտություն)

Դիցուք P –ն բիզնես պրոցես է, α –ն պրեդիկատ է՝ կախված օպերատորների որոշակի մուտքային փոփոխականներից, իսկ β –ն պրեդիկատ է՝ կախված օպերատորների որոշակի ելքային փոփոխականներից(այսուհետև՝ *էական*): Կանվանենք α -ն և β -ն *նախապայման* և *վերջնապայման*, համապատասխանաբար:

P –ն կոռեկտ է α -ի և β -ի նկատմամբ $\Leftrightarrow [\alpha(P) = 1 \text{ և } P\text{-ն ավարտվում է} \Rightarrow \beta(P) = 1]$

Նշ. $M(P)$ (կրճատ՝ M) – P բիզնես պրոցեսի բոլոր էական փոփոխականների բազմությունը:

Այս գլխում սահմանվում է կամայական P A-պրոցեսի $\Psi(P) : B \rightarrow B$ և $\Psi(P)$ և $2^B \rightarrow 2^B$ արտապատկերումները հաշվարկող ալգորիթմները՝ ենթադրելով, որ կամայական օպերատոր ունի իրեն բնորոշ ունիկալ արտոնություն և որպես հիմք ընդունելով բիզնես պրոցեսի մեկնաբանության ալգորիթմը: Նշված ալգորիթմները օգտագործվում են հետագայում՝ ֆորմալ վերիֆիկացիայի խնդրի լուծման նպատակով:

Դիցուք P-ն բիզնես պրոցես է և $X \in N \cup C$, $M \subseteq \times_{v \in o(X), X \in N} \text{DOM}(v) : \text{Բիզնես պրոցեսի վիճակ կանվանենք } \times_{Y \in N \cup C} M \text{ States}(Y)$ կորուեծը, որտեղ $\text{States}(X) = \times_{v \in i(X)} \text{DOM}(v)$

¹⁵ W.M.P. van der Aalst, K.M. van Hee, A.H.M. ter Hofstede, N. Sidorova, H.M.W. Verbeek, M. Voorhoeve, and M.T. Wynn. “Soundness of Workflow Nets: Classification, Decidability, and Analysis”. *Formal Aspects of Computing*, 2011

և $States(M) = \times_{v \in M} DOM(v) : \mathcal{L}_2$, $B = \times_{Y \in NUCOM} States(Y)$ P -ի բոլոր վիճակների բազմությունը, իսկ $b(X) - ով՝ b \in B$ վիճակի արտապատկերումը $X \in NUCOM$ -ի համար:

§2.4-ում տրվում է խնդրի դրվածքը: Այն է.

- կառուցել բիզնես պրոցեսների նախագծման շաբլոնները կառուցող ԲՊՆՇ հանրահաշիվ,
- սահմանել ITIL, PRM-IT, ITSM, MOF գրադարանների պրոցեսների տրամաբանությանը համապատասխանող նախապայմաններ և վերջնապայմաններ,
- դիտարկել ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը կառուցված ինվարիանտների նկատմամբ՝ բերելով այն հանրահաշիվի հիմք հանդիսացող տարրական պրոցեսների ֆորմալ վերիֆիկացիայի խնդրին,
- ընդհանրացնել ԲՊՆՇ ֆորմալ վերիֆիկացիայի ալգորիթմը բոլոր տիպի բիզնես պրոցեսների համար:

Շրջորդ գլխում նկարագրված է բիզնես պրոցեսների նախագծման շաբլոնների(ԲՊՆՇ) դասը և նրան կառուցող հանրահաշիվը: Ցույց է տրվել, որ գոյություն ունի բազիս՝ տարրական պրոցեսներից, և նրանց նկատմամբ կիրառվող գործողություններ, որոնց միջոցով հնարավոր է կառուցել կամայական ԲՊՆՇ: Ցույց է տրվում, որ ցիկլիկ ԲՊՆՇ-ի ֆորմալ վերիֆիկացիայի խնդիրը բերվում է ացիկլիկ ԲՊՆՇ-ի ֆորմալ վերիֆիկացիայի խնդրին:

§3.1-ում նկարագրվում է բիզնես պրոցեսների ԲՊՆՇ հանրահաշիվը:

Սահմանում (պրիմիտիվ)

- *Պարզ պրիմիտիվ* u -ն մի օպերատորից բաղկացած պարզագույն պրոցեսն է: Օրինակ, $\forall a \in N$ հանդիսանում է պարզ պրիմիտիվ, ընդ որում $In(u) = Out(u) = N(u) = \{a\}$
- *Մինխրոնիզացիայի պրիմիտիվ* u -ն հանդիսանում է կոնեկտորների միավորման հանգույցը մոդելավորող պարզագույն պրոցեսը՝
 $a_i \in N, e_j = \langle a_j, a_m, c_j \rangle \in E, c_j \in C; 1 \leq i \leq m, 1 \leq j \leq m-1, m > 2$
 $c_1 = c_2 = \dots = c_{m-1} = 1$, ընդ որում $N(u) = \{a_i | 1 \leq i \leq m\}$, $In(u) = \{a_j | 1 \leq j \leq m-1\}$, $Out(u) = \{a_m\}$
- *Ճյուղավորման պրիմիտիվ* u -ն հանդիսանում է էլքային կոնեկտորների ճյուղավորման հանգույցը մոդելավորող պարզագույն պրոցեսը՝
 $a_i \in N, e_j = \langle a_1, a_{j+1}, c_j \rangle \in E, c_j \in C; 1 \leq i \leq m, 1 \leq j \leq m-1, m > 2$, ընդ որում
 $N(u) = \{a_i | 1 \leq i \leq m\}$, $In(u) = \{a_1\}$, $Out(u) = \{a_j | 2 \leq j \leq m\}$

\mathcal{L}_2 . BU – պրիմիտիվների բազմությունը, AT - ացիկլիկ ԲՊՆՇ-ների բազմությունը: Կհամարենք, որ $BU \subseteq AT$: $u \in BU$ -ի համար \mathcal{L}_2 . $type(u) = \{պարզ\}$ - պարզ պրիմիտիվի, $type(u) = \{սինխրոնիզացիայի\}$ – սինխրոնիզացիայի պրիմիտիվի և $type(u) = \{ճյուղավորումի\}$ – ճյուղավորման պրիմիտիվի համար:

Սահմանում(կոնկատենացիայի գործողություն)

Դիցուք $P_1 \in AT$ և $P_2 \in AT$, այնպիսին որ $In(P_1) = \{ip_1\}$, $Out(P_1) = \{op_1, \dots, op_{k_1}\}$, $In(P_2) = \{ip'_1\}$, $Out(P_2) = \{op'_1, \dots, op'_{k_2}\}$, $k_1 > 0$, $k_2 > 0$: P_1 -ի և P_2 -ի կոնկատենացիա ըստ $op_k \in Out(P_1)$ և $c \in C(P_1)$ կանվանենք $P' = Concat(P_1, P_2, k, c)$ ացիկլիկ ԲՊՆՇ-ն, որի համար

$N=N(P_1) \cup N(P_2)$, $C=C(P_1) \cup C(P_2) \cup c$, $E=E(P_1) \cup E(P_2) \cup \langle op_k, ip'_1, c \rangle$,
 $1 \leq k \leq k_1$, $\Delta=\Delta(P_1) \cup \Delta(P_2) \cup \Delta(\langle op_k, ip'_1 \rangle)$, $M=M(P_1) \cup M(P_2)$.

Սահմանում (միավորման գործողություն)

Դիցուք $P \in AT$, $u \in BU$ և $type(u) = \{u_i | i \in \mathbb{N}\}$, այնպիսիք, որ $In(P) = \{ip_1\}$,
 $Out(P) = \{op_1, \dots, op_{k_0}\}$, $k_0 > 0$, $In(u) = \{iu_1, \dots, iu_m\}$, $Out(u) = \{ou_1\}$,

$1 \leq m \leq k_0$: P -ի և u -ի միավորումը ըստ \bar{k} -ի և \bar{c} -ի կանվանենք $P' = Merge(P, u, \bar{k}$

, \bar{c}) ացիկլիկ ԲՊՆՇ-ն, որի համար $\bar{C} = \langle c_1, \dots, c_m \rangle$, $\bar{k} = \langle k_1, \dots, k_m \rangle$, եթե
 $k_i \in Out(P)$, $k_i \neq k_j$, $i \neq j$, $1 \leq i, j \leq m$ և $N = N(u) \cup N(P)$, $C = C(u) \cup C(P) \cup c$,
 $M = M(u) \cup M(P)$, $E = E(u) \cup E(P) \cup$ $\Delta = \Delta(u) \cup \Delta(P) \cup$

$$\langle op_{k_i}, iu_1, c_i \rangle \cup \dots \cup \langle op_{k_m}, iu_m, c_m \rangle \cup \Delta(op_{k_i}, iu_1) \cup \dots \cup \Delta(op_{k_m}, iu_m)$$

Ն₂. $BU(P)$ - P պրոցեսի կառուցմանը մասնակցած պրիմիտիվների բազմությունը: c -ն

և \bar{c} -ը կանվանենք *գործողության պայման* համապատասխանաբար

կոնկատենացիայի և միավորման գործողությունների համար: $c(u)$ -ով նշանակենք u
պրիմիտիվի և P ացիկլիկ շաբլոնի կապակցման գործողության պայմանը, ընդ որում,
 $c(u) \equiv 1$, եթե պրիմիտիվը չի կապակցվել որևէ շաբլոնի հետ: Ն₂. $Op_R(Op_{R-1}(\dots Op_2(Op_1(u_0, u_1, k_1, c_1), u_2, k_2, c_2) \dots), u_R, k_R, c_R) \equiv Op_R(Op_{R-1}(\dots Op_1(BU') \dots))$,
 $BU' = \{u_0, u_1, \dots, u_R\}$, $Op_i \in \{Concat, Merge\}$, $u_i \in BU$, $1 \leq i \leq R$:

Սահմանում (կանոնավոր ացիկլիկ ԲՊՆՇ)

- $\forall u \in BU$ կանոնավոր ացիկլիկ ԲՊՆՇ է $\Rightarrow BU \subseteq AT$:
- $\forall P = Op_R(Op_{R-1}(\dots Op_1(BU') \dots))$, $R > 0$, որտեղ $Op_i \in \{Concat, Merge\}$, $1 \leq i \leq R$
 $\Rightarrow P \in AT$
- Այլ կանոնավոր ացիկլիկ ԲՊՆՇ չկա

Սահմանում (ցիկլի գործողություն)

Դիցուք P ԲՊՆՇ-ի համար $\exists BU' = \{u, u_1, \dots, u_k, u'\} \subseteq BU(P)$; $\exists Op_R(Op_{R-1}(\dots Op_1(BU') \dots))$,
 $Op_i \in \{Concat, Merge\}$, $1 \leq i \leq R$, $a \in In(u)$ և $a' \in Out(u')$; այնպիսին, որ

- $\forall (a_1 \in path(a, a'), a_2 \in path(a, a'), a_1 \neq a_2) \Rightarrow (\exists path(a_1, a_2) \ \& \ !\exists path(a_2, a_1)) \vee (\exists path(a_2, a_1) \ \& \ !\exists path(a_1, a_2))$
- $type(u') \neq \{u_i | i \in \mathbb{N}\}$, $type(u_i) \neq \{u_i | i \in \mathbb{N}\}$, $1 \leq i \leq k$
- Եթե $\exists u'' \in \{u, u_1, \dots, u_k, u'\}$, $type(u'') = \{\delta | \delta \text{ շրջանավորում}\} \Rightarrow In(u'') \in BR(P)$

Ցիկլի Cycle(P, u, u', a, a', c) գործողության կիրառումը P շաբլոնի վրա
իրենից ներկայացնում է P' ցիկլիկ ԲՊՆՇ, որի համար

$$N(P') = N(P), C(P') = C(P) \cup c, E(P') = E(P) \cup \langle a', a, c \rangle,$$

$$\Delta(P') = \Delta(P) \cup \Delta(a', a), M(P') = M(P_1).$$

Ն₂. $Cycle_R(Cycle_{R-1}(\dots Cycle_2(Cycle_1(P, u_{10}, u_{11}, a_{10}, a_{11}, c_1), u_{20}, u_{21}, a_{20}, a_{21}, c_2) \dots), u_{R0}, u_{R1}, a_{R0}, a_{R1}, c_R) \equiv Cycle_R(Cycle_{R-1}(\dots Cycle_1(P) \dots))$, $R > 0$:

Սահմանում (կանոնավոր ցիկլիկ ԲՊՆՇ) Այն P ցիկլիկ պրոցեսը, որը կառուցվում է $P_1 \in AT$ նկատմամբ վերջավոր անգամ կիրառելով ցիկլի գործողությունը՝

$$P = Cycle_R(Cycle_{R-1}(\dots Cycle_1(P_1) \dots)), R > 0$$

Կնշ. $AT = \langle BU, Concat, Merge \rangle$, իսկ $CT = \langle AT, Cycle \rangle$ -ով՝ բոլոր կանոնավոր ցիկլիկ ԲՊՆՇ-ների բազմությունը:

Պնդում 3.1

$BPT = \langle BU, Concat, Merge, Cycle \rangle$ կազմում է ԲՊՆՇ հանրահաշիվ $Concat$, $Merge$ և $Cycle$ գործողությունների նկատմամբ:

Սահմանում (բերելի բիզնես պրոցես)

Բիզնես պրոցեսը կանվանենք բերելի, եթե բավարարվում են հետևյալ պայմանները.

- a. $\forall A \in N$ և $A' \in N$ օպերատորներն համաձայնեցված են
- b. $\forall A \in N; |A^{\rightarrow}| > 1 \Rightarrow |A^{\leftarrow}| = 1$
- c. $\forall A \in N; |A^{\leftarrow}| > 1 \Rightarrow \forall A' \in A^{\leftarrow} (|A'^{\rightarrow}| = 1 \ \& \ \forall A'' \in A'^{\leftarrow}; |A''^{\rightarrow}| = 1)$
- d. $\forall \sigma \in \Omega, G \in K_{\sigma}, \langle G, D, t_1 \rangle \in E, D \notin K_{\sigma} \Rightarrow \exists e' \in E; t_2 = \pi_3(e'), \pi_2(e') \in K_{\sigma}, t_1 = \lceil t_2$

Պնդում 3.2

$\forall P \in AT \Leftrightarrow P$ -ն բերելի A-պրոցես է

Պնդում 3.3

$\forall P \in CT \Leftrightarrow P$ -ն բերելի C-պրոցես է

Թեորեմ 3.1

$\forall P$ բիզնես պրոցես՝ ITIL, PRM-IT, ITSM, MOF գրադարաններից, պատկանում է ԲՊՆՇ հանրահաշիվով ստացվող պրոցեսների բազմությանը:

§3.2-ում սահմանվում է սկզբնարժեքավորման նախապայման և կատարման վերջնապայման պրիմիտիվների և ԲՊՆՇ-ների համար, ինչպես նաև ձևակերպվում է թեորեմ ԲՊՆՇ ֆորմալ վերիֆիկացիայի խնդրի լուծելիության մասին:

Սահմանում (պրիմիտիվի սկզբնարժեքավորման նախապայման)

$\alpha(u)$ -ն կանվանենք պրիմիտիվի սկզբնարժեքավորման նախապայման $u \in BU$ պրիմիտիվի համար, եթե $\alpha(u) = \bigwedge_{a \in In(u)} i_a \in i(a), \exists x \langle x, i' \rangle \in \Delta(OUT, a) \quad i'_a \neq \perp$

Սահմանում (պրիմիտիվի կատարման վերջնապայման)

$\beta(u)$ -ն կանվանենք $u \in BU$ պրիմիտիվի կատարման վերջնապայման, եթե

$$\beta(u) = \begin{cases} b(a), \text{ where } type(u) = 'simple', Act(u) = \{a\} \\ \bigwedge_{a_i \in Act(u)} b(a_i), \text{ where } type(u) = 'synchronization' \\ b(a_1) \wedge \left(\bigvee_{a_i \in Act(u) / a_1} pb(a_i) \vee \neg \left(\bigwedge_{a_i \in Act(u) / a_1} pb(a_i) \right) \right), \text{ where } \\ type(u) = 'split' \end{cases}$$

$b(a_i)$ -ն “ճիշտ է” a_i օպերատորի կատարումից հետո: $pb(a_i)$ -ն “ճիշտ է”, եթե a_i օպերատորը կատարվել է անցման պայմանի բավարարման դեպքում, և “սխալ է”, եթե օպերատորը չի կարող կատարվել անցման պայմանի չբավարարվելու պատճառով:

Սահմանում (շարքնի սկզբնարժեքավորման նախապայման)

$\alpha = \bigwedge_{u \in U_1(P)} \alpha(u) \ \& \ c(u), \quad U_1(P) \subseteq U(P)$ -ն կանվանենք $P \in BPT$ ԲՊՆՇ-ի

սկզբնարժեքավորման նախապայման:

Սահմանում (շարքնի կատարման վերջնապայման)

